



ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂԶՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ, Տ. ԹՈՐԳՈՄԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐԷԻՆ
ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ
ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն
զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել»

(Մատթ. Ժ. 28)

Սրբոց Վարդանանց նահատակութեան հազար հինգ հարիւր քառասուներորդ տարեդարձը այս տարի դիմաւորում ենք ինքնիշխան մեր Մայր Հայրենիքում, մասնաւոր ոգեշնչմամբ:

Ինչպէս մենք արտայայտուեցինք անցեալ տարի, 27 նոյեմբերին Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհրդում, Վարդանանց հերոսամարտը մեր պատմութեան հորիզոնի վրայ հանդիսացել է իր ժամանակին, անկախութեան մի հռչակամարտ:

Հայ ժողովրդի քրիստոնէական հաւատքի եւ ազգային դպրութեան լուսածին ոսկեդարը, չէր հանդուրժուել մազդէական հեթանոս Պարսկաստանի կողմից, նրանում տեսնելով հայ ժողովրդի ազգային ինքնութեան

հզօր կազմաւորումը: Հեթանոս մոգերին հարկաւոր էր խաւիանել հայոց կրօնական ու մշակութային զարթօնքը, ապահովելու եւ առաւել ամրապնդելու նպատակով նրանց քաղաքական ստրկացումը:

Այս ճշմարտութիւնը լաւ էին հասկացել թէ՛ հայերը և թէ՛ մագդէական պարսիկները: Հայերի վճռականութիւնը բացարձակ էր Արտաշատի ժողովի պատասխանով, ուղղված Հազկերտի զօրաց հրամանատար Միհրնէրսէհին՝ «Այս հաւատքից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ ոեւէ այլ դառն հարուած»:

Վարդանանց պատերազմի պատմութիւնը ծանօթ է բոլորիս: 5-րդ դարի 451 թուականի գարնանը, պարսից զօրքը գերազանց ուժգնական ուժերով յարձակուեց Հայաստանի վրայ, գլխաւոր նպատակ ունենալով արմատախիլ անել քրիստոնէութիւնը, բնաջնջել եկեղեցին ու այսպիսով հանգցնել հայոց ոսկեդարեան արեւացած լոյսը:

Սպարապետ Վարդան Մամիկոնեանը, մի ձեռքին Սուրբ Գիրքը, միւսին՝ Սուրբ Էջմիածնում օրհնուած սուրը, իր քաջերով կռուի իջաւ Աւարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին: Պատերազմը վերջացաւ Վարդանի ու նրա զինակիցների մահատակութեամբ, թուով հազար երեսունվեց քաջեր: Թուում էր թէ հայերը, պարտուել են: Թուում էր թէ Վասակ իշխանը առաւել իրատես քաղաքականութիւն էր առաջադրել: Սակայն իրողութիւնն այն է, որ Վարդանանք իրենց մահատակութեամբ առաւել հայկական հզօր ազգութիւն կերտեցին, քան Վասակը, որը գուցէ պիտի կարողանար խուսափել պատերազմից, մագդէական կրօնը ընդունելով, գուցէ պիտի կարողանար փրկել ժողովրդի մարմինը, սակայն նրա հոգին խեղդամահ անելու գնով եւ դրանով նրա մարմինն էլ ստրկացնելով: Վարդանը եւ իր զինակիցները դէպի Աւարայր գնացին, գիտակցելով թէ պիտի պարտուեն մարմնապէս, համոզուած սակայն, որ մահուամբ մահին պիտի յաղթեն: Ահա Վարդանի վերջին խօսքը կռուից առաջ՝ «Ով իմ քաջ նիզակակիցներ... չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմութիւնից... եթէ հասել է ժամանակը մեր կեանքը սուրբ մահով աւարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թէ արիութեան ու քաջութեան մէջ վախկոտութիւն չխառնենք»: Վարդան Մամիկոնեանը յաղթել էր պատերազմը սկսելուց առաջ:

Վարդանանք, այո, յաղթեցին, որովհետեւ մահատակուեցին հաւատքով արդար, որ Քրիստոսի դատարկ գերեզմանը մնում է յաւերժ վկայութիւնը լուռ յարութեան ու շարունակում պայծառակերպել մահկանացուների կեանքն ու ճակատագիրը:

Յետագայ պատմական իրադարձութիւնները ապացուցեցին Վարդանանց յաղթութեան ճշմարտութիւնը: Աւարայրի հերոսամարտի ոգով գօտեւեցին հայ ժողովուրդը երեսուն տարի շարունակ չխոնարհուեց հեթանոսութեան մատնեց խաւարի ուժերին, Նուարսակում 484 թուին: Հայաստանում վերականգնուեց քրիստոնէութիւնը ու շարունակեց ճառագայթել լոյսը մեր ոսկեդարի: Լոյս, որը յետ այնու դարեր շարունակ այլեւս երբեք չհանգաւ: Հայ ժողովուրդն ու եկեղեցին իրենց հոգում տկապէս վառ պահեցին սուրբ յիշատակը ազատատենչ Վարդանանց մահատակների, տկապէս վառ պահեցին քրիստոնէական հաւատը, տկապէս ծաղկեցրին դպրութիւնն ու գրականութիւնը, հարստացնելով մեր ազգի պարծանք գանձատունը՝ մշակոյթի, գիտութեան ու արուեստների:

Յիշատակութեան արժանի է Աւարայրի պատերազմից յետոյ, կամաւոր նահատակութիւնը այն երկու հարիւր տասնեւերեք զօրականների ու բազմաթիւ հոգեւորականների՝ գլխաւորութեամբ Յովսէփ կաթողիկոսի եւ Ղեւոնդ երէցի, որոնց մասին վկայում է Եղիշէ պատմիչը եւ ասում. «Այս երանելիները ոչ թէ որեւէ ակնկալութիւն ունէին մարմնաւոր կեանքի համար, այլ իմաստութեամբ հնարք էին փնտռում, զոհուելու ամբողջ աշխարհի շինութեան համար»:

Մեր ազգի մասին մեծագոյն վկայութիւններից մէկն է այս՝ «Զոհուել ամբողջ աշխարհի շինութեան համար»: Յիշենք այս վկայութիւնը արդար հպարտութեամբ, մանաւանդ որ յոյժ այժմեական է հնչում այն մեր այս ալեկոծ ժամանակներին: Աւարայրը համաշխարհային պատմութեան մէջ մըտնում է իբրեւ առաջին պատերազմը վասն կրօնական խղճի ազատութեան:

Աւարայր՝ այսօր քո անունն է՝ Հայաստանի ազատութեան հռչակում, այսօր քո անունն է՝ ազգային պայծառ զարթօնք՝ «Ի ննջմանէ արքայական», այսօր քո անունն է՝ յաղթանակ սուրբ հաւատի ու մայրենի լեզուի:

Օրհնութիւն եւ լոյս Ղեւոնդեանց ու Վարդանանց Սուրբ յիշատակին:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ, հալեցեալք յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7):

Հարցի Դ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տումա կոնդակս ի 7 փետրուարի
1991 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԽ

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

Հմր. 1752

